

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 թվականի հոկտեմբերի 1-ի
թիվ 65/2014 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Կենցաղային ջեռոցների եւ
օդաքարշ պահարանի էներգապիտակավորման մասին»
2010/30/ԵՄ հրահանգը լրացնող
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի
մայիսի 19-ի «էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ այլ
ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին ստանդարտ
տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին» 2010/30/ԵՄ
հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,
քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի
էներգասպառող եւ խնայող այնպիսի արտադրանքի պիտակավորմանն
առնչվող պատվիրակված ակտեր, որոնք ունեն էներգիայի խնայողության

¹ ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

զգալի պոտենցիալ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության մակարդակներում էական տարբերություն.

- 2) էլեկտրական ջեռոցների կողմից սպառվող էներգիան կազմում է Միությունում ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը: Բացի արդեն ձեռք բերված էներգաարդյունավետության բարելավումից՝ կարելի է այդ սարքերի էներգասպառումն էլ ավելի նվազեցնելու հնարավորությունը.
- 3) կենցաղային էլեկտրական ջեռոցների էներգապիտակավորման դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 8-ի «Կենցաղային էլեկտրական ջեռոցների էներգապիտակավորման մասին» 2002/40/ԵՀ հրահանգով².
- 4) վերջին տարիներին կենցաղային խոհանոցային սարքերի ոլորտում տեխնոլոգիական զարգացումը շատ արագ է տեղի ունենում: Համաձայն էկոնախագծման նախապատրաստական ուսումնասիրությունների՝ կենցաղային գազօջախները եւ օդաքարշ սարքերն ունեն էներգիայի խնայողության զգալի պոտենցիալ: Ապահովելու համար, որ էներգիայի պիտակները դինամիկ կերպով խթանեն մատակարարներին էլ ավելի բարելավել այս սարքերի էներգաարդյունավետությունը եւ արագացնել էներգաարդյունավետ տեխնոլոգիաների անցումը շուկա, 2002/40/ԵՄ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի, եւ պետք է սահմանվեն նոր դրույթներ.
- 5) սույն կանոնակարգի դրույթները պետք է կիրառվեն կենցաղային էլեկտրական ջեռոցների եւ գազօջախների (այդ թվում՝ սալօջախներին միացված լինելու դեպքում) եւ կենցաղային էլեկտրական օդաքարշ սարքերի նկատմամբ.
- 6) սույն կանոնակարգով պետք է ներդրվի A⁺⁺⁺-ից մինչեւ D էներգաարդյունավետության վերանայված սանդղակ՝ բոլոր համապատասխան ջեռոցների համար, եւ A-ից մինչեւ G

² ՊՏ L 128, 15.5.2002թ., էջ 45:

Էներգաարդյունավետության նոր սանդղակ՝ ավելացնելով «+» սանդղակի վերելում յուրաքանչյուր երկու տարին մեկ մինչև կենցաղային օդաքարշ պահարանների մասով A+++ դասին հասնելը, այս լրացուցիչ դասերը պետք է ավելացվեն շուկայում բարձր արդյունավետության սարքերի տարածումն արագացնելու համար.

- 7) ակնկալվում է, որ սույն կանոնակարգում եւ Կենցաղային ջեռոցներին, կրակարաններին եւ օդաքարշ պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջների մասով Հանձնաժողովի թիվ 66/2014³ կանոնակարգով (ԵՄ) սահմանված դրույթների համատեղ ազդեցությունը 2020 թվականին կհանգեցնի 27 ՊՋ/տարի տարեկան առաջնային էներգիայի խնայողության, որը մինչև 2030 թվականը կաճի մինչև 60 ՊՋ/տարի.
- 8) կենցաղային օդաքարշ պահարանների ձայնի հզորության մակարդակը վերջնական սպառողների համար կարող է լինել կարելուր չափանիշ: Կենցաղային օդաքարշ պահարանների պիտակների վրա պետք է ներառվի տեղեկություններ՝ ձայնի հզորության մակարդակների մասին՝ հնարավորություն տալու համար վերջնական սպառողներին կայացնել հիմնավորված որոշում.
- 9) համապատասխան պիտակների վրա ներկայացված տեղեկությունները պետք է ստացվեն հաշվարկման եւ չափման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների միջոցով, որոնք հիմնված են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից հաշվարկման եւ չափման մեթոդների, այդ թվում՝ համապատասխանության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, որոնք թվարկված են «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածում¹.

³ Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 33-րդ էջը:

- 10) սույն կանոնակարգում պետք է սահմանվեն կենցաղային ջեռոցների (այդ թվում՝ սալօջախներին միացված լինելու դեպքում) եւ կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների պիտակների միասնական ձեւը եւ բովանդակությունը.
- 11) սույն կանոնակարգում պետք է սահմանվեն կենցաղային ջեռոցների (այդ թվում՝ սալօջախներին միացված լինելու դեպքում) եւ կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների, նաեւ ոչ կենցաղային նպատակներով օգտագործվողների տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկին ներկայացվող պահանջներ.
- 12) սույն կանոնակարգում պետք է սահմանվեն կենցաղային ջեռոցների (այդ թվում՝ սալօջախներին միացված լինելու դեպքում) եւ կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների, նաեւ ոչ կենցաղային նպատակներով օգտագործվող կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների հեռահար վաճառքի, գովազդի եւ տեխնիկական գովազդային նյութերի ցանկացած ձեւի համար տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջներ.
- 13) նպատակահարմար է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը եւ մասնավորապես այն մոտեցման արդյունավետությունը եւ նպատակահարմարությունը, որը կիրառվում է կենցաղային ջեռոցների էներգաարդյունավետության դասերի որոշման համար,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են կենցաղային էլեկտրական ջեռոցների եւ գազօջախների (այդ թվում՝ սալօջախներին միացված լինելու դեպքում) ու կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների, այդ թվում՝ ոչ կենցաղային նպատակներով վաճառվող կենցաղային էլեկտրական օդաքարշ պահարանների պիտակավորման եւ արտադրանքի մասին լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջներ:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
 - ա) էլեկտրականությունից կամ գազից տարբերվող էներգիայի աղբյուրների օգտագործմամբ ջեռոցներ.
 - բ) «միկրոալիքային տաքացման» գործառույթ ունեցող ջեռոցներ.
 - գ) փոքր ջեռոցներ.
 - դ) շարժական ջեռոցներ.
 - ե) ջերմակուտակիչ ջեռոցներ.
 - զ) ջեռոցներ, որոնք տաքացվում են գոլորշիով՝ որպես առաջնային տաքացման գործառույթ.
 - է) միայն «երրորդ սերնդի» գազերով (պրոպան եւ բութան) օգտագործման համար նախատեսված ջեռոցներ:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն թիվ 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով տրված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «ջեռոց» նշանակում է սարք կամ սարքի մի մաս, որը ներառում է էլեկտրաէներգիա եւ (կամ) գազ օգտագործող մեկ կամ մի քանի փակ խցիկներ, որոնց մեջ սնունդը պատրաստվում է սովորական կամ հովհարչի կիրառմամբ տաքացման ռեժիմով.
- 2) «խցիկ» նշանակում է փակ բաժին, որտեղ ջերմաստիճանը կարող է վերահսկվել սննդի պատրաստման համար.
- 3) «բազմախցիկ ջեռոց» նշանակում է երկու կամ ավելի խցիկներով ջեռոց, որոնցից յուրաքանչյուրը տաքացվում է առանձին.
- 4) «փոքր ջեռոց» նշանակում է ջեռոց, որի մեջ բոլոր խցիկներն ունեն 250 մմ-ից պակաս լայնություն եւ խորություն կամ 120 մմ-ից պակաս բարձրություն.
- 5) «շարժական ջեռոց» նշանակում է 18 կգ-ից պակաս զանգված ունեցող ջեռոց՝ պայմանով, որ այն նախատեսված չէ ներկառուցված սարքավորումների համար.
- 6) «միկրոալիքային տաքացում» նշանակում է սննդի տաքացում էլեկտրամագնիսական էներգիայի օգտագործմամբ.
- 7) «սովորական ռեժիմ» նշանակում է ջեռոցի խցիկում տաքացված օդի շրջանառության համար միայն բնական կոնվեկցիայի օգտագործմամբ ջեռոցի շահագործման ռեժիմ.
- 8) «հովհարչի կիրառմամբ տաքացման ռեժիմ» նշանակում է ջեռոցի ռեժիմ, որի դեպքում ներկառուցված հովհարչի միջոցով ջեռոցի խցիկում շրջանառվում է տաքացված օդ.
- 9) «ցիկլ» նշանակում է որոշակի պայմաններում ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածքի տաքացման ժամանակահատված.
- 10) «սալօջախ» նշանակում է ջեռոցից եւ գազ կամ էլեկտրաէներգիա օգտագործող կրակարանից բաղկացած սարք.
- 11) «շահագործման ռեժիմ» նշանակում է օգտագործման մեջ գտնվող ջեռոցի կարգավիճակ.

- 12) «տաքացման աղբյուր» նշանակում է ջեռոցի տաքացման համար հիմնական էներգիայի ձեւ.
- 13) «օդաքարշ պահարան» նշանակում է սարք, որը գործարկվում է դրա կողմից վերահսկվող շարժիչով եւ նախատեսված է կրակարանի վերեւից աղտոտված օդը հավաքելու համար, կամ որը ներառում է հետադարձ քաշանքի համակարգ՝ նախատեսված խոհանոցային սալօջախների, կրակարանների եւ պատրաստման նմանատիպ արտադրանքին կից ներկառուցման համար, որը քաշում է գոլորշին ներսի օդաքարշ խողովակ.
- 14) «պատրաստման ընթացքում ավտոմատ աշխատանքի ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում օդաքարշ պահարանի օդի հոսքը պատրաստման ընթացքում ավտոմատ կերպով վերահսկվում է սենսորի (սենսորների) միջոցով, այդ թվում՝ խոնավության, ջերմաստիճանի եւ այլնի մասով.
- 15) «ամբողջությամբ ավտոմատ օդաքարշ պահարան» նշանակում է օդաքարշ պահարան, որում օդի հոսքը եւ (կամ) այլ գործառույթներ ավտոմատ կերպով վերահսկվում են սենսորի (սենսորների) միջոցով՝ 24 ժամվա ընթացքում՝ ներառյալ՝ պատրաստման ժամանակը.
- 16) «առավելագույն արդյունավետության կետ» (ԱԱԿ) նշանակում է օդաքարշ պահարանի աշխատանքային կետը, որի դեպքում հիդրոգազադինամիկայի արդյունավետությունն առավելագույնն է ($C_{\text{օդաքարշ պահարան}}$).
- 17) «լուսավորման արդյունավետություն» ($L_{\text{օդաքարշ պահարան}}$) նշանակում է կենցաղային օդաքարշ պահարանի լուսավորման համակարգի միջին լուսավորվածության եւ լուսավորման համակարգի հզորության միջեւ հարաբերակցությունը՝ արտահայտված լյուքս/Վտ-ով.
- 18) «յուղերի ֆիլտրման արդյունավետություն» ($E_{\text{օդաքարշ պահարան}}$) նշանակում է օդաքարշ պահարանների յուղերի ֆիլտրերում պահվող յուղերի հարաբերական մասը.
- 19) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում սարքը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, սակայն չի կատարում որեւէ գործառույթ կամ

միայն ցույց է տալիս անջատված ռեժիմի կարգավիճակը կամ կատարում է միայն էլեկտրամագնիսական համապատասխանության ապահովման համար նախատեսված գործառույթներ՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2004/108/ԵՀ հրահանգի¹.

- 20) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ սարքը միացված է էլեկտրասնուցման ցանցին, նախատեսված ձեւով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման ցանցից ստացվող էներգիա եւ կատարում միայն վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ եւ միացված վերաակտիվացման գործառույթի եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ.
- 21) «վերաակտիվացման գործառույթ» նշանակում է գործառույթ, որը դյուրացնում է այլ ռեժիմների ակտիվացումը, այդ թվում՝ ակտիվ ռեժիմը հեռակառավարման անջատիչի, ներառյալ՝ հեռակառավարման վահանակի, ներքին սենսորի կամ լրացուցիչ գործառույթների, այդ թվում՝ հիմնական գործառույթի կատարումը միացնող ժամաչափի միջոցով.
- 22) «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում» նշանակում է շարունակական գործառույթ, որը տեղեկություններ է տրամադրում սարքավորման մասին կամ ցույց է տալիս դրա կարգավիճակը ցուցադրիչի, այդ թվում՝ ժամացույցների վրա.
- 23) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է, կամ ակնկալվում է, որ կգնի արտադրանքը.
- 24) «վաճառքի կետ» նշանակում է վայր, որտեղ սարքերը ցուցադրված են եւ (կամ) առաջարկվում են վաճառքի կամ վարձակալության համար.
- 25) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է նույն տեխնիկական պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կամ ներմուծողի կողմից առետրային ծածկագրի այլ համարով շուկայահանված մեկ այլ մոդել:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը

Մատակարարները ապահովում են հետեւյալը.

- 1) պիտակների, տեղեկաթերթիկների եւ տեխնիկական փաստաթղթերի մասով՝
 - ա) կենցաղային ջեռոցների համար՝
 - i) յուրաքանչյուր կենցաղային ջեռոց համալրված է տպագրված պիտակով (պիտակներով), որը պարունակում է III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով տեղեկություններ՝ ջեռոցի յուրաքանչյուր խցիկի վերաբերյալ.
 - ii) շուկայահանված կենցաղային ջեռոցների համար տրամադրվում է IV հավելվածի Ա կետում նշված արտադրանքի տեղեկաթերթիկը.
 - iii) անդամ պետությունների մարմինների հարցմամբ տրամադրվում են V հավելվածի Ա կետում նշված տեխնիկական փաստաթղթերը.
 - iv) կենցաղային ջեռոցի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվում է էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը ներառում է էներգիայի սպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
 - v) կենցաղային ջեռոցի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշակի տեխնիկական պարամետրերը, ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասը.
 - vi) յուրաքանչյուր կենցաղային ջեռոցի մոդելի յուրաքանչյուր խցիկի համար դիլերներին տրամադրվում է III հավելվածի 1-ին կետում նշված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող էլեկտրոնային պիտակ.

vii) յուրաքանչյուր կենցաղային ջեռոցի մոդելի համար դիլերներին տրամադրվում է IV հավելվածի Ա կետում նշված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը.

բ) կենցաղային օդաքարշ պահարանների համար՝

i) յուրաքանչյուր կենցաղային օդաքարշ պահարան համալրված է տպագրված պիտակով, որը պարունակում է III հավելվածի 2-րդ կետում նշված ձեւաչափով տեղեկություններ.

ii) շուկայահանված կենցաղային օդաքարշ պահարանների համար տրամադրվում է IV հավելվածի Բ կետում նշված արտադրանքի տեղեկաթերթիկը.

iii) անդամ պետությունների մարմինների հարցմամբ տրամադրվում են V հավելվածի Բ կետում նշված տեխնիկական փաստաթղթերը.

iv) կենցաղային օդաքարշ պահարանի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվում է էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը ներառում է էներգիայի սպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.

v) կենցաղային օդաքարշ պահարանի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշակի տեխնիկական պարամետրերը, ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասը.

vi) յուրաքանչյուր կենցաղային օդաքարշ պահարանի մոդելի համար դիլերներին տրամադրվում է այնպիսի ձեւաչափով եւ այնպիսի տեղեկություններ պարունակող էլեկտրոնային պիտակ, որը սահմանված է III հավելվածի 2-րդ կետով.

vii) յուրաքանչյուր կենցաղային օդաքարշ պահարանի մոդելի համար դիլերներին տրամադրվում է IV հավելվածի Բ կետում նշված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը.

2) արդյունավետության դասերի մասով՝

- ա) կենցաղային ջեռոցների համար ջեռոցի խցիկի էներգաարդյունավետության դասը սահմանվում է I հավելվածի 1-ին կետի եւ II հավելվածի 1-ին կետի համաձայն.
- բ) կենցաղային օդաքարշ պահարանների համար՝
 - i) էներգաարդյունավետության դասերը սահմանվում են I հավելվածի 2(ա) կետի եւ II հավելվածի 2.1 կետի համաձայն.
 - ii) հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասերը սահմանվում են I հավելվածի 2(բ) կետի եւ II հավելվածի 2.2 կետի համաձայն.
 - iii) լուսավորման արդյունավետության դասերը սահմանվում են I հավելվածի 2(գ) կետի եւ II հավելվածի 2.3 կետի համաձայն.
 - iv) յուղերի ֆիլտրման արդյունավետության դասերը սահմանվում են I հավելվածի 2 (դ) ենթակետի եւ II հավելվածի 2.4 կետի համաձայն.

3) պիտակների ձեւաչափերի մասով՝

- ա) կենցաղային ջեռոցների համար ջեռոցի խցիկի պիտակի ձեւաչափը պետք է համապատասխանի III հավելվածի 1-ին կետին՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված սարքերի համար.
- բ) կենցաղային օդաքարշ պահարանների համար պիտակի ձեւաչափը պետք է համապատասխանի III հավելվածի 2-րդ կետին՝ համաձայն հետեւյալ ժամանակացույցի՝
 - i) այն կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում, որոնք 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանվել են A, B, C, D, E, F եւ G էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 2.1.1 կետին (Պիտակ 1), կամ

Եթե մատակարարները նպատակահարմար են համարում, այդ հավելվածի 2.1.2 կետին (Պիտակ 2).

- ii) այն կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում, որոնք 2016 թվականի հունվարի 1-ից շուկայահանվել են A⁺, A, B, C, D, E եւ F էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 2.1.2 կետին (Պիտակ 2), կամ եթե մատակարարները նպատակահարմար են համարում, այդ հավելվածի 2.1.3 կետին (Պիտակ 3).
- iii) այն կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում, որոնք 2018 թվականի հունվարի 1-ից շուկայահանվել են A⁺⁺, A⁺, A, B, C, D եւ E էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 2.1.3 կետին (Պիտակ 3), կամ եթե մատակարարները նպատակահարմար են համարում, այդ հավելվածի 2.1.4 կետին (Պիտակ 4).
- i) այն կենցաղային օդաքարշ պահարանների համար, որոնք 2020 թվականի հունվարի 1-ից շուկայահանվել են A⁺⁺⁺, A⁺⁺, A⁺, A, B, C եւ D էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 2.1.4 կետին (Պիտակ 4), կամ եթե մատակարարները նպատակահարմար են համարում, III հավելվածի 2.1.4-րդ կետին (Պիտակ 4):

Հոդված 4

Դիլերների պարտականությունները

Դիլերները ապահովում են հետեւյալը.

1) կենցաղային ջեռոցների համար՝

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր ջեռոցի վրա զետեղվում է մատակարարի կողմից 3(1)(ա)(i) հոդվածի համաձայն տրամադրված

պիտակ՝ յուրաքանչյուր խցիկի համար, որը ցուցադրվում է սարքի դիմացի կամ վերելի հատվածում կամ անմիջապես սարքի մոտ, որպեսզի հստակորեն տեսանելի լինի եւ հնարավոր լինի այն նույնականացնել որպես մոդելին պատկանող պիտակ՝ առանց պիտակի վրա ապրանքանիշի անվանումը եւ մոդելի համարը կարդալու անհրաժեշտության.

- բ) այն դեպքում, երբ վերջնական սպառողը չի կարող տեսնել ցուցադրված արտադրանքը, ինչպես նշված է 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածում, վաճառքի կամ վարձակալության հանված ջեռոցները շուկայահանվում են սույն կանոնակարգի VI հավելվածի Ա մասի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվում է համացանցով, ինչի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.
- գ) ջեռոցի որոշակի մոդելի վերաբերյալ հեռահար վաճառքի եւ մարքեթինգի ցանկացած ձեւի կամ տեսակի առնչությամբ գովազդը պարունակում է էներգաարդյունավետության դասի մասին հղում, եթե գովազդը պարունակում է էներգիայի սպառման կամ գնի հետ կապված տեղեկություններ.
- դ) որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է ջեռոցի տեխնիկական պարամետրերը, ներառում է մոդելի էներգաարդյունավետության դասը.

2) կենցաղային օդաքարշ պահարանների համար՝

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր կենցաղային օդաքարշ պահարան ուղեկցվում է մատակարարի կողմից 3(1)(բ)(i) հոդվածի համաձայն տրամադրված պիտակով, որը ցուցադրվում է սարքի դիմացի կամ վերելի հատվածում կամ անմիջապես սարքի մոտ,

- որպեսզի հստակորեն տեսանելի լինի եւ հնարավոր լինի այն նույնականացնել որպես մոդելին պատկանող պիտակ՝ առանց պիտակի վրա ապրանքանիշի անվանումը եւ մոդելի համարը կարդալու անհրաժեշտության.
- բ) այն դեպքում, երբ վերջնական սպառողը չի կարող տեսնել ցուցադրված արտադրանքը, ինչպես նշված է 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածում, վաճառքի կամ վարձակալության հանված կենցաղային օգաքարշ պահարանները շուկայահանվում են սույն կանոնակարգի VI հավելվածի Բ մասի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվում է համացանցով, ինչի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.
- գ) կենցաղային օգաքարշ պահարանի որոշակի մոդելի վերաբերյալ հեռահար վաճառքի եւ շուկայահանման ցանկացած ձեւի կամ տեսակի առնչությամբ գովազդը պարունակում է էներգաարդյունավետության դասի մասին հղում, եթե գովազդը պարունակում է էներգիայի սպառման կամ գնի հետ կապված տեղեկություններ.
- դ) որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է կենցաղային օգաքարշ պահարանի տեխնիկական պարամետրերը, ներառում է մոդելի էներգաարդյունավետության դասը:

Հոդված 5

Չափման եւ հաշվարկման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածներով նախատեսված տեղեկություններն ստացվում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերով, որոնք հիմնված են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից հաշվարկման եւ չափման մեթոդների վրա:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանության նպատակով շուկայի վերահսկողության ստուգումներ անցկացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են VIII հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը՝ ոչ ուշ, քան 2021 թվականի հունվարի 1-ը:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

Հանձնաժողովի թիվ 2002/40/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2015 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 9

Անցումային դրույթները

1. Այն կենցաղային ջեռոցները, որոնք համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին եւ շուկայահանվում կամ դրվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը, համարվում են 2002/40/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:
2. 2015 թվականի հունվարի 1-ից մինչեւ ապրիլի 1-ը դիլերները կարող են 4(1)(բ) հոդվածը կիրառել այդ դրույթով սահմանված որոշակի ջեռոցների նկատմամբ:

3. 2015 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը դիլերները կարող են 4(1)(բ) հոդվածը կիրառել այդ դրույթով սահմանված որոշակի օդաքարշ պահարանների նկատմամբ:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը եւ կիրառումը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:
2. Կիրառելի է 2015 թվականի հունվարի 1-ից: Սակայն 3(1)(ա)(iv) եւ (v), 3(1)(բ)(iv) եւ (v), 4(1)(բ), (գ) եւ (դ), 4(2)(բ), (գ) եւ (դ) հոդվածները կիրառվում են 2015 թվականի ապրիլի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բոյուսելում 2013 թվականի հոկտեմբերի 1-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել Բաղդոս

ՀԱՎԵԼՎԱԾ I

Արդյունավետության դասերը

1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՑՆԵՐ

Կենցաղային ջեռոցների էներգաարդյունավետության դասերը սահմանվում են յուրաքանչյուր խցիկի համար առանձին՝ համաձայն սույն հավելվածի 1-ին աղյուսակում նշված արժեքների: Ջեռոցների էներգաարդյունավետությունը սահմանվում է II հավելվածի 1-ին կետի համաձայն:

Աղյուսակ 1

Կենցաղային ջեռոցների էներգաարդյունավետության դասեր

Էներգաարդյունավետության դաս	Էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱԻ _{խցիկ})
A+++ (ամենաարդյունավետ)	$\text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 45$
A++	$45 \leq \text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 62$
A+	$62 \leq \text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 82$
A	$82 \leq \text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 107$
B	$107 \leq \text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 132$
C	$132 \leq \text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} < 159$
D (ամենաքիչ արդյունավետ)	$\text{ԷԱԻ}_{\text{խցիկ}} \geq 159$

2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐԶ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

ա) Կենցաղային օդաքարշ պահարանների էներգաարդյունավետության դասերը սահմանվում են սույն հավելվածի 2-րդ աղյուսակում նշված արժեքների համաձայն: Կենցաղային օդաքարշ պահարանների էներգաարդյունավետության ցուցիչը (ԷԱԻ_{օդաքարշ պահարան}) հաշվարկվում է II հավելվածի 2.1 կետի համաձայն:

Աղյուսակ 2

Կենցաղային օդաքարշ պահարանների էներգաարդյունավետության դասեր

Էներգաարդյունավետության դաս	Էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱՌ _{օդաքարշ} պահարան)			
	Պիտակ 1	Պիտակ 2	Պիտակ 3	Պիտակ 4
A+++ (ամենաարդյունավետ)				ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 30
A++			ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 37	30 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 37
A+		ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 45	37 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 45	37 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 45
A	ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 55	45 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 55	45 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 55	45 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 55
B	55 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 70	55 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 70	55 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 70	55 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 70
C	70 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 85	70 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 85	70 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 85	70 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 85
D	85 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 100	85 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 100	85 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 100	ԷԱՌ _{օդաքարշ} պահարան ≥ 85
E	100 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 110	100 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 110	ԷԱՌ _{օդաքարշ} պահարան ≥ 100	
F	110 ≤ ԷԱՌ _{օդաքարշ} պահարան < 120	ԷԱՌ _{օդաքարշ} պահարան ≥ 110		
G (ամենաքիչ արդյունավետ)	ԷԱՌ _{օդաքարշ} պահարան ≥ 120			

բ) Կենցաղային օդաքարշ պահարանների հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասերը սահմանվում են համաձայն դրա հիդրոգազադինամիկայի արդյունավետության ($\zeta_{\text{ԳԴԱ-օդաքարշ պահարան}}$)՝ հետևյալ 3-րդ աղյուսակին համապատասխան: Կենցաղային օդաքարշ պահարանների հիդրոգազադինամիկայի արդյունավետությունը սահմանվում է II հավելվածի 2.2 կետի համաձայն:

Աղյուսակ 3

Կենցաղային օդաքարշ պահարանների հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասեր

Հիդրոգազադինամիկայի արդյունավետության դաս	Հիդրոգազադինամիկայի արդյունավետություն (ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան})
A (ամենաարդյունավետ)	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} > 28
B	$23 < \text{ՀԳԴԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 28$
C	$18 < \text{ՀԳԴԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 23$
D	$13 < \text{ՀԳԴԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 18$
E	$8 < \text{ՀԳԴԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 13$
F	$4 < \text{ՀԳԴԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 8$
G (ամենաքիչ արդյունավետ)	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} ≤ 4

- գ) Կենցաղային օդաքարշ պահարանների լուսավորման արդյունավետության դասերը սահմանվում են համաձայն դրա լուսավորման արդյունավետության (ԼԱ_{օդաքարշ պահարան})՝ հետևյալ 4-րդ աղյուսակին համապատասխան: Կենցաղային օդաքարշ պահարանների լուսավորման արդյունավետությունը սահմանվում է II հավելվածի 2.3 կետի համաձայն:

Աղյուսակ 4

Կենցաղային օդաքարշ պահարանների լուսավորման արդյունավետության դասեր

Լուսավորման արդյունավետության դաս	Լուսավորման արդյունավետություն (ԼԱ _{օդաքարշ պահարան})
A (ամենաարդյունավետ)	ԼԱ _{օդաքարշ պահարան} > 28
B	$20 < \text{ԼԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 28$
C	$16 < \text{ԼԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 20$
D	$12 < \text{ԼԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 16$
E	$8 < \text{ԼԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 12$
F	$4 < \text{ԼԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 8$
G (ամենաքիչ արդյունավետ)	ԼԱ _{օդաքարշ պահարան} ≤ 4

- դ) Կենցաղային օդաքարշ պահարանի յուղերի ֆիլտրման արդյունավետության դասերը սահմանվում են համաձայն դրա յուղերի ֆիլտրման արդյունավետության (ՅՖԱ_{օդաքարշ պահարան})՝ հետևյալ 5-րդ աղյուսակին համապատասխան: Կենցաղային օդաքարշ պահարանների յուղերի ֆիլտրման արդյունավետությունը սահմանվում է II հավելվածի 2.4 կետի համաձայն:

Աղյուսակ 5

Կենցաղային օդաքարշ պահարանների (ՅՖԱ_{օդաքարշ պահարան}) յուղերի ֆիլտրման արդյունավետության դասեր

Յուղերի ֆիլտրման արդյունավետության դաս	Յուղերի ֆիլտրման արդյունավետություն (%)
A (ամենաարդյունավետ)	$\text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} > 95$
B	$85 < \text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 95$
C	$75 < \text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 85$
D	$65 < \text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 75$
E	$55 < \text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 65$
F	$45 < \text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 55$
G (ամենաքիչ արդյունավետ)	$\text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} \leq 45$

ՀԱՎԵԼՎԱԾ II

Չափումները եւ հաշվարկումները

Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանության եւ այդ համապատասխանության ստուգման նպատակներով չափումներն ու հաշվարկները պետք է կատարվեն այնպիսի հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդով, որը հիմնված է համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների, այդ թվում՝ այնպիսի ներդաշնակեցված ստանդարտների վրա, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*: Դրանք

պետք է համապատասխանեն սույն հավելվածով սահմանված տեխնիկական սահմանումներին, պայմաններին, հավասարումներին եւ պարամետրերին:

1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՅՆԵՐ

Կենցաղային ջեռոցի խցիկի էներգասպառումը չափվում է մեկ ստանդարտացված ցիկլի համար, սովորական եւ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմով, հնարավորության դեպքում՝ տաքացնելով ջրով ներծծված ստանդարտացված բեռը: Պետք է ստուգել, արդյոք փորձարկման ցիկլի ընթացքում ջեռոցի խցիկի ներսում ջերմաստիճանը հասնում է թերմոստատի եւ (կամ) ջեռոցի հսկողության ցուցադրիչի սահմանված ջերմաստիճանին: Մեկ ցիկլի համար էներգասպառումը, որը համապատասխանում է ամենաարդյունավետ ռեժիմին (սովորական ռեժիմ կամ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմ), օգտագործվում է հետեւյալ հաշվարկումներում:

Կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար էներգաարդյունավետության ինդեքսը ($EUR_{\text{խցիկ}}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւերի համաձայն՝

Կենցաղային էլեկտրական ջեռոցների համար՝

$$EUR_{\text{խցիկ}} = \frac{EU_{\text{էլեկտրական խցիկ}}}{UEU_{\text{էլեկտրական խցիկ}}} \times 100$$

$$UEU_{\text{էլեկտրական խցիկ}} = 0,0042 \times V + 0,55 \text{ (կՎտ/ժ-ով)}$$

Կենցաղային գազօջախների համար՝

$$EUR_{\text{խցիկ}} = \frac{EU_{\text{գազային խցիկ}}}{UEU_{\text{գազային խցիկ}}} \times 100$$

$$UEU_{\text{գազային խցիկ}} = 0044 \times V + 0,55 \text{ (ՄՋ-ով)}$$

Որտեղ՝

- *ԷԱԽ_{խցիկ}*՝ էներգաարդյունավետության ինդեքսը՝ կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար՝ արտահայտված տոկոսով, կլորացված տասնորդական նիշով.
- *ՍԷՍ_{էլեկտրական խցիկ}*՝ ցիկլի ընթացքում էլեկտրական տաքացված կենցաղային ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռը տաքացնելու համար պահանջվող ստանդարտ էներգասպառում (էլեկտրականություն)՝ արտահայտված կՎտ/ժ-ով, կլորացված հարյուրերորդական նիշով.
- *ՍԷՍ_{գազային խցիկ}*՝ ցիկլի ընթացքում կենցաղային գազօջախի խցիկում ստանդարտացված բեռը տաքացնելու համար պահանջվող ստանդարտ էներգասպառում՝ արտահայտված ՄՋ-ով, կլորացված հարյուրերորդական նիշով.
- $V =$ Կենցաղային ջեռոցի խցիկի ծավալը լիտրերով (L)՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- *ԷՍ_{էլեկտրական խցիկ}*՝ ցիկլի ընթացքում էլեկտրական տաքացված կենցաղային ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածություն տաքացնելու համար պահանջվող էներգասպառում՝ արտահայտված կՎտ/ժ-ով, կլորացված հարյուրերորդական նիշով.
- *ԷՍ_{գազային խցիկ}*՝ ցիկլի ընթացքում կենցաղային գազօջախի գազով ջեռուցվող խցիկում ստանդարտացված բեռը տաքացնելու համար պահանջվող էներգասպառում՝ արտահայտված ՄՋ-ով, կլորացված հարյուրերորդական նիշով:

2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

2.1. Էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկում (ԷԱԽ_{օղաքարչ պահարան})

Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԽ_{օղաքարչ պահարան}) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$ՀԱԻ_{\text{օդաքարշ պահարան}} = \frac{S\xi U_{\text{օդաքարշ պահարան}}}{US\xi U_{\text{օդաքարշ պահարան}}} \times 100$$

Եւ կլորացվում տասնորդական նիշով:

Որտեղ՝

- $US\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի ստանդարտ տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտ/տ-ով, կլորացված տասնորդական նիշով.
- $S\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտ/տ-ով, կլորացված տասնորդական նիշով:

Կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան ստանդարտ էներգասպառումը ($US\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$US\xi U_{\text{օդաքարշ պահարան}} = 0.55 \times (W_{\text{սս}} + W_L) + 15.3$$

Որտեղ՝

- $W_{\text{սս}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի մուտքային էլեկտրական հզորությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Վատտով եւ կլորացված տասնորդական նիշով.
- W_L -ը պատրաստման մակերեսային վրա կենցաղային օդաքարշ պահարանի լուսավորման համակարգի էլեկտրաէներգիայի անվանական մուտքային հզորությունն է՝ արտահայտված Վատտով եւ կլորացված տասնորդական նիշով:

Կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան էներգասպառումը ($S\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$) հաշվարկվում է հետևյալ կերպ.

- i) ամբողջությամբ ավտոմատ կենցաղային օդաքարշ պահարանների համար՝

$S_{\text{ՕՊԱՔԱՐԶ ԱՍԻԱՐԱՆ}}$

$$= \left[\frac{(W_{\text{ԱԱԿ}} \times t_H \times f) + (W_L + t_L)}{60 + 1000} + \frac{P_w \times (1440 - t_H \times f)}{2 \times 60 \times 1000} + \frac{P_v \times (1440 - t_H \times f)}{2 \times 60 \times 1000} \right] \times 365$$

ii) մյուս բոլոր կենցաղային օգաքարշ պահարանների համար՝

$$S_{\text{ՕՊԱՔԱՐԶ ԱՍԻԱՐԱՆ}} = \frac{[W_{\text{ԱԱԿ}} \times (t_H \times f) + W_L \times t_L]}{60 \times 1000} \times 365$$

Որտեղ՝

- t_L -ը լուսավորման օրական միջին ժամանակն է՝ արտահայտված բոպեններով ($t_L = 120$).
- t_H -ը կենցաղային օգաքարշ պահարանի շահագործման օրական միջին ժամանակն է՝ արտահայտված բոպեններով ($t_H = 60$).
- P_w -ն կենցաղային օգաքարշ պահարանի՝ անջատված ռեժիմում մուտքային էլեկտրական հզորությունն է՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով.
- P_v -ն կենցաղային օգաքարշ պահարանի՝ սպասման ռեժիմում մուտքային էլեկտրական հզորությունն է՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով.
- f -ը ժամանակի ավելացման գործոնն է՝ հաշվարկված եւ կլորացված տասնորդական նիշով հետեւյալ կերպ՝

$$f = 2 - (\text{ՀԳԴԱ}_{\text{ՕՊԱՔԱՐԶ շարք}} \times 3,6) / 100:$$

2.2. Հիդրոգազադինամիկայի արդյունավետության հաշվարկում ($\text{ՀԳԴԱ}_{\text{ՕՊԱՔԱՐԶ ԱՍԻԱՐԱՆ}}$)

Հիդրոգազադինամիկայի արդյունավետությունը ($\text{ՀԳԴԱ}_{\text{ՕՊԱՔԱՐԶ ԱՍԻԱՐԱՆ}}$) առավելագույն արդյունավետության կետում հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով եւ կլորացվում տասնորդական նիշով՝

$$\text{ՀԳՄ}_{\text{օդաքարշ պահարան}} = \frac{Q_{\text{ԱԱԿ}} + P_{\text{ԱԱԿ}}}{3600 + W_{\text{ԱԱԿ}}} \times 100$$

Որտեղ՝

- $Q_{\text{ԱԱԿ}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի հոսքի արագությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված մ³/ժ-ով և կլորացված տասնորդական նիշով.
- $P_{\text{ԱԱԿ}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի ստատիկ ճնշման տարբերությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Պա-ով և կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- $W_{\text{ԱԱԿ}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի մուտքային էլեկտրական հզորությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Վատտով և կլորացված տասնորդական նիշով:

2.3. Լուսավորման արդյունավետության հաշվարկում ($LU_{\text{օդաքարշ պահարան}}$)

Կենցաղային օդաքարշ պահարանի լուսավորման արդյունավետությունը ($LU_{\text{օդաքարշ պահարան}}$) միջին լուսավորվածության և լուսավորման համակարգի էլեկտրաէներգիայի անվանական մուտքային հզորության միջև հարաբերակցությունն է: Այն հաշվարկվում է լյուքսով՝ մեկ Վատտի համար, և կլորացվում մինչև ամենամոտ ամբողջ թիվը հետևյալ կերպ՝

$$LU_{\text{օդաքարշ պահարան}} = \frac{E_{\text{միջին}}}{W_L}$$

Որտեղ՝

- $E_{\text{միջին}}$ -ը պատրաստման մակերեսային վրա լուսավորման համակարգի՝ ստանդարտ պայմաններում չափվող միջին լուսավորվածությունն է՝ արտահայտված լյուքսով և կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- W_L -ը պատրաստման մակերեսային վրա կենցաղային օդաքարշ պահարանի լուսավորման համակարգի էլեկտրաէներգիայի

անվանական մուտքային հզորությունն է՝ արտահայտված Վատտով եւ կլորացված տասնորդական նիշով:

2.4. Յուղերի ֆիլտրման արդյունավետության հաշվարկում (ՅՖԱ_{օդաքարշ պահարան})

Կենցաղային օդաքարշ պահարանի յուղերի ֆիլտրման արդյունավետությունը (ՅՖԱ_{օդաքարշ պահարան}) օդաքարշ պահարանների յուղերի ֆիլտրերում պահվող յուղերի համեմատական քանակությունն է: Այն հաշվարկվում է եւ կլորացվում տասնորդական նիշով հետեւյալ կերպ՝

$$\text{ՅՖԱ}_{\text{օդաքարշ պահարան}} = [w_j / (w_w + w_r + w_j)] \times 100[\%]$$

Որտեղ՝

- w_j ՝ յուղի զանգվածը յուղերի ֆիլտրի մեջ, այդ թվում՝ բոլոր հանվող կափարիչները՝ արտահայտված գրամով եւ կլորացված տասնորդական նիշով.
- w_w ՝ օդաքարշ պահարանի օդային ուղիներում պահվող յուղի զանգվածը՝ արտահայտված գրամով եւ կլորացված տասնորդական նիշով.
- w_r ՝ բարձր արդյունավետության ֆիլտրում պահվող յուղի զանգվածը՝ արտահայտված գրամով եւ կլորացված տասնորդական նիշով:

2.5. Աղմուկը

Աղմուկի արժեքը (դԲ-ով) չափվում է ինչպես կենցաղային օդաքարշ պահարանի՝ Ա սանդղակով չափված օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները (միջին չափված արժեք՝ L_{U2})՝ նորմալ օգտագործման համար ամենաբարձր կարգավորման դեպքում՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Պիտակը**

1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԶԵՌՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԻՏԱԿ

1.1. **Կենցաղային էլեկտրական ջեռոցներ**

1.1.1. Պիտակի ներկայացում՝ կենցաղային էլեկտրական ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար

The image shows a standard European energy label for a washing machine. At the top left is the European Union flag. To its right, the word "ENERG" is written in large letters, with "енергия" (Russian) and "ενέργεια" (Greek) below it. Further right are four small circles containing the letters Y, UA, IE, and IA. Below this header, there are two empty boxes labeled I and II. A central icon depicts a washing machine with a power cord. To the right of the icon is a large black arrow pointing left, containing the text "A+++". To the left of this arrow is a vertical scale of energy classes represented by colored bars: A+++ (dark green), A++ (medium green), A+ (light green), A (yellow), B (orange), C (red-orange), and D (red). Below the energy scale, there are two boxes. The left box contains an icon of a washing machine and the text "YZ L". The right box contains an icon of a washing machine and the text "X.YZ kWh/cycle*". At the bottom of the label, there is a line of small text listing the word "cycle" in various languages: * цикл · cyklus · portion · zykus · πρόγραμμα · ciclo · tsükkel · ohjelma · ciklus ciklas · cikls · čiklu · cyclus · cykl · ciclu · program · cykel. The number "65/2014" is printed at the very bottom.

I, II

III

IV

V, VI


1.1.2. Պիտակի վրա ներառված տեղեկություններ՝ կենցաղային էլեկտրական ջեռոցներ

Պիտակի վրա ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

- I. Մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
- II. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով կենցաղային ջեռոցի որոշակի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ այլ մոդելներից.
- III. Կենցաղային ջեռոցի էներգիայի աղբյուրը.
- IV. Խցիկի՝ I հավելվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության դասը: Ցուցիչային տառ պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- V. Խցիկի օգտագործվող ծավալը՝ արտահայտված լիտրերով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. Մեկ ցիկլի համար էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ/ցիկլ-ով (էլեկտրականության սպառում)՝ խցիկի (սովորական եւ առկայության դեպքում սեղմված օդով կոնվեկցիա) տաքացման գործառույթի (գործառույթների) համար փորձարկման ընթացակարգերի համաձայն սահմանված ստանդարտ բեռնվածության հիման վրա, կլորացված հարյուրերորդական նիշով (էՄ_{էլեկտրական խցիկ}):

1.1.3. Պիտակի նախագծում՝ կենցաղային էլեկտրական ջեռոցներ

Կենցաղային էլեկտրական ջեռոցի յուրաքանչյուր խցիկի պիտակի նախագծումը պետք է համապատասխանի հետևյալ պատկերին՝



Ընդ որում՝

- i) պիտակը պետք է ունենա առնվազն 85 մմ լայնություն եւ 170 մմ բարձրություն: Երբ պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համամասնական մնա վերը նշված տեխնիկական նկարագրին.
- ii) ֆոնը պետք է լինի սպիտակ.

- iii) գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 տոկոս կապտականաչ, 70 տոկոս կարմրամանուշակագույն, 100 տոկոս դեղին, 0 տոկոս սեւ.
- iv) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝
1. **Եզրագիծ՝** 4 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ:
 2. **ԵՄ լոգո (պատկերանիշ)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
 3. **Էներգիայի պատկերանիշ՝** գույն՝ X-00-00-00, գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ լոգո + էներգապիտակ՝ լայնություն՝ 70 մմ, բարձրություն՝ 14 մմ:
 4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծ՝** 1.5 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, երկարություն՝ 70 մմ:
 5. **Էներգաարդյունավետության դասերի սանդղակ**
 - **Սլաք՝** 5.5 մմ բարձրություն, 1 մմ տարածություն, գույներ՝
Ամենաբարձր դաս՝ X-00-X-00
Երկրորդ դաս՝ 70-00-X-00
Երրորդ դաս՝ 30-00-X-00
Չորրորդ դաս՝ 00-00-X-00
Հինգերորդ դաս՝ 00-30-X-00
Վեցերորդ դաս՝ 00-70-X-00
Վերջին դաս՝ 00-X-X-00.
 - **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 18 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի»

տառատեսակ, թավ, 12 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դաս

- **Սլաք՝** լայնություն՝ 20 մմ, բարձրություն՝ 10 մմ, 100 տոկոս սեւ.
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 24 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 18 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

7. Էներգիայի սպառում մեկ ցիկլի համար՝

- **Եզրագիծ՝** 1.5 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ.
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 19 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ:

8. Ծավալ՝

- **Եզրագիծ՝** 1.5 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ.
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 20 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ:


9. Աստղանիշ՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 6 կետաչափ, 100 տոկոս սեւ:

10. Կանոնակարգի համար՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ

11. **Մատակարարի անուն կամ ապրանքային նշան:**
12. **Մատակարարի մոդելի նույնականացուցիչ:**
13. Մատակարարների անունը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 70 x 13 մմ տարածքում:

1.2. Կենցաղային գազօջախներ

1.2.1. Պիտակի ներկայացում՝ կենցաղային գազօջախի յուրաքանչյուր խցիկի համար



1.2.2. Պիտակի վերաբերյալ տեղեկություններ

Պիտակի վրա ներառվում են հետևյալ տեղեկությունները՝


- I. մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով որոշակի կենցաղային ջեռոցի մոդելը

տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ այլ մոդելներից.

- III. կենցաղային ջեռոցի էներգիայի աղբյուրը.
- IV. խցիկի՝ I հավելվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության դասը: Յուրեղային տառ պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- V. խցիկի օգտագործվող ծավալը՝ արտահայտված լիտրերով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. մեկ ցիկլի համար էներգասպառումը՝ արտահայտված ՄՋ/ցիկլ-ով եւ կՎտժ/ցիկլ-ով՝ (գազի սպառում)՝ խցիկի (սովորական եւ առկայության դեպքում սեղմված օդով կոնվեկցիա) տաքացման գործառույթի (գործառույթների) համար փորձարկման ընթացակարգերի համաձայն սահմանված ստանդարտ բեռնվածության հիման վրա, կլորացված հարյուրերորդական նիշով(*EU_{գազային խցիկ}*):

1.2.3. Պիտակի նախագծում՝ կենցաղային գազօջախներ

Կենցաղային գազօջախի յուրաքանչյուր խցիկի պիտակի նախագծումը պետք է համապատասխանի հետեւյալ պատկերին՝



Ընդ որում՝

- i) պիտակը պետք է ունենա առնվազն 85 մմ լայնություն եւ 170 մմ բարձրություն: Երբ պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համամասնական մնա վերը նշված տեխնիկական նկարագրին.
- ii) ֆոնը պետք է լինի սպիտակ.
- iii) գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 տոկոս կապտականաչ, 70 տոկոս կարմրամանուշակագույն, 100 տոկոս դեղին, 0 տոկոս սեւ.
- iv) պիտակը պետք է բավարարի հետեյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին՝
 1. **Պիտակի եզրագիծ՝** 4 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ:
 2. **ԵՄ լոգո (պատկերանիշ)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
 3. **Էներգիայի պատկերանիշ՝** գույն՝ X-00-00-00, գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ լոգո + էներգապիտակ, լայնություն՝ 70 մմ, բարձրություն՝ 14 մմ:
 4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծ՝** 1.5 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, երկարություն՝ 70 մմ:
 5. **Էներգաարդյունավետության դասերի սանդղակ**
 - **Սլաք՝** 5.5 մմ բարձրություն, 1 մմ տարածություն, գույներ՝
Ամենաբարձր դաս՝ X-00-X-00
Երկրորդ դաս՝ 70-00-X-00
Երրորդ դաս՝ 30-00-X-00

Չորրորդ դաս՝ 00-00-X-00

Հինգերորդ դաս՝ 00-30-X-00

Վեցերորդ դաս՝ 00-70-X-00

Վերջին դաս՝ 00-X-X-00.

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 18 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 12 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դաս

- **Սլաք՝** լայնություն՝ 20 մմ, բարձրություն՝ 10 մմ, 100 տոկոս սեւ.
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 24 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 18 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

7. Էներգիայի սպառում մեկ ցիկլի համար՝

- **Եզրագիծ՝** 1.5 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 19 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ:

8. Ծավալը՝

- **Եզրագիծ՝** 1.5 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 20 կետաչափ, 100


տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ:

9. **Աստղանիշ՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 6 կետաչափ, 100 տոկոս սեւ:
10. **Կանոնակարգի համար՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ:
11. **Մատակարարի անուն կամ ապրանքային նշան:**
12. **Մատակարարի մոդելի նույնականացուցիչ:**
13. Մատակարարների անունը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 70 x 13 մմ տարածքում:

2. ՊԻՏԱԿՆԵՐ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2.1. **Պիտակների ձեւաչափերը**

2.1.1. Կենցաղային օդաքարշ պահարանները A-ից մինչեւ G էներգաարդյունավետության դասերում (պիտակ 1)




I, II

III

IV

V, VI, VII, VIII

2.1.2. Կենցաղային օդափարշ պահարանները A+-ից մինչև F էներգաարդյունավետության դասերում (պիտակ 2)




I, II

III

IV

V, VI, VII, VIII

2.1.3. Կենցաղային օդափարշ պահարանները A++-ից մինչև E էներգաարդյունավետության դասերում (պիտակ 3)




I, II

III

IV

V, VI, VII, VIII

2.1.4. Կենցաղային օդաքարշ պահարանները A+++-ից մինչև D էներգաարդյունավետության դասերում (պիտակ 4)



I, II

III

IV

V, VI, VII, VIII


2.2. Պիտակի մասով տեղեկություններ՝ կենցաղային օգաքարշ պահարաններ

Պիտակի վրա ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով որոշակի կենցաղային օգաքարշ պահարանի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ այլ մոդելներից.
- III. կենցաղային օգաքարշ պահարանի՝ I հավելվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության դասը: Կենցաղային օգաքարշ պահարանի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. տարեկան էներգասպառումը (SEU_{օգաքարշ պահարան})՝ հաշվարկված II հավելվածի համաձայն, արտահայտված կՎտժ-ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- V. I հավելվածի համաձայն սահմանված հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասը.
- VI. I հավելվածի համաձայն սահմանված լուսավորման արդյունավետության դասը.
- VII. I հավելվածի համաձայն սահմանված յուղերի ֆիլտրման արդյունավետության դասը.
- VIII. աղմուկի արժեքը՝ սահմանված II հավելվածի 2.5 կետի համաձայն, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

2.3. Պիտակի նախագծում՝ կենցաղային օգաքարշ պահարաններ

Պիտակի նախագծումը պետք է համապատասխանի հետևյալ պատկերին՝



Ընդ որում՝

- i) պիտակը պետք է ունենա առնվազն 60 մմ լայնություն եւ 120 մմ բարձրություն: Երբ պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համամասնական մնա

վերը նշված տեխնիկական նկարագրին.

- ii) ֆոնը պետք է լինի սպիտակ.
- iii) գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 տոկոս կապտականաչ, 70 տոկոս կարմրամանուշակագույն, 100 տոկոս դեղին, 0 տոկոս սեւ.
- iv) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝
 1. **Պիտակի եզրագիծ՝** 3 կետաչափ՝ գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 2 մմ:
 2. **ԵՄ լոգո (պատկերանիշ)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
 3. **Էներգիայի պատկերանիշ՝** գույն՝ X-00-00-00, գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ լոգո + էներգապիտակ՝ լայնություն՝ 51 մմ, բարձրություն՝ 10 մմ:
 4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծ՝** 1 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, երկարություն՝ 51 մմ:
 5. **Էներգաարդյունավետության դասերի սանդղակ**
 - **Սլաք՝** բարձրություն՝ 4 մմ, տարածություն՝ 0.75 մմ՝ գույներ՝
 - Ամենաբարձր դաս՝ X-00-X-00
 - Երկրորդ դաս՝ 70-00-X-00
 - Երրորդ դաս՝ 30-00-X-00
 - Չորրորդ դաս՝ 00-00-X-00
 - Հինգերորդ դաս՝ 00-30-X-00
 - Վեցերորդ դաս՝ 00-70-X-00

Վերջին դաս՝ 00-X-X-00.

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 7 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դաս

- **Սլաք՝** լայնություն՝ 15 մմ, բարձրություն՝ 8 մմ, 100 տոկոս սեւ.
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 17 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 12 կետաչափ, սպիտակ, մեկ շարքի վրա:

7. Տարեկան էներգասպառում

- **Եզրագիծ՝** 1 կետաչափ՝ գույնը՝ 100 տոկոս կապտականաչ , կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 21 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 8 կետաչափ, 100 տոկոս սեւ:

8. Հիդրոգազադինամիկայի արդյունավետություն

- Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝
- **Եզրագիծ՝** 1 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ , կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 6 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 11.5 կետաչափ, 100 տոկոս սեւ:

9. Լուսավորման արդյունավետությունը

- Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է

- **Եզրագիծ՝** 1 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ , կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 6 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 11.5 կետաչափ, 100 տոկոս սեւ:

10. Յուղերի ֆիլտրման արդյունավետություն

- **Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 1 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ , կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 10 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 14 կետաչափ, 100 տոկոս սեւ:

11. Աղմուկի մակարդակ

- **Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 1 կետաչափ, գույնը՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 6 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 11.5 կետաչափ, 100 տոկոս սեւ:

12. Կանոնակարգի համար՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 8 կետաչափ, 100 տոկոս սեւ:

13. Մատակարարի անուն կամ ապրանքային նշան:

14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչ:

15. Մատակարարների անունը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 51 x 9 մմ տարածքում:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Տեղեկաթերթիկը****Ա. ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

1. Կենցաղային ջեռոցների՝ 3(1)(ա) (ii) հոդվածում նշված արտադրանքի տեղեկաթերթիկում ներկայացված տեղեկությունները տրամադրվում են ստորեւ սահմանված կարգով եւ հերթականությամբ եւ ներառվում արտադրանքի մասին բրոշյուրում կամ արտադրանքի հետ տրամադրված այլ գրականության մեջ՝
 - ա) մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով որոշակի կենցաղային ջեռոցի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ եւ կենցաղային ջեռոցի պիտակում պարունակվող ցանկացած պարամետրի համար հայտարարված տարբեր արժեքներով այլ մոդելներից (III հավելվածի 1-ին կետ).
 - գ) մոդելի յուրաքանչյուր խցիկի համար էներգաարդյունավետության ինդեքսը (EAC_{իսցիկ})՝ հաշվարկված II հավելվածի 1-ին կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով. էներգաարդյունավետության հայտարարված ինդեքսը չպետք է գերազանցի V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված ինդեքսը.
 - դ) I հավելվածի 1-ին աղյուսակում սահմանված յուրաքանչյուր խցիկի մոդելի էներգաարդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
 - ե) յուրաքանչյուր խցիկի համար մեկ ցիկլի համար էներգասպառումը, հնարավորության դեպքում սովորական ռեժիմով եւ օդափոխիչի

կիրառմամբ տաքացման ռեժիմով (չափվող էներգասպառումն արտահայտվում է կՎտժ-ով (էլեկտրական ջեռոցներ եւ գազօջախներ) եւ ՄՋ-ով (գազօջախներ), կլորացվում է հարյուրերորդական նիշով). հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.

զ) խցիկների թիվը, մեկ խցիկի համար տաքացման աղբյուրը (աղբյուրները) եւ յուրաքանչյուր խցիկի ծավալը:

2. Եթե մոդելին, Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 25–ի թիվ 66/2010 կանոնակարգի համաձայն¹, շնորհվել է Եվրոպական միության էկոպիտակ, կարող է ավելացվել էկոպիտակի պատճենը՝ չհակասելով Համայնքի էկոպիտակի սխեմայի պահանջներին:
3. Մեկ տեղեկաթերթիկը կարող է ներառել տեղեկություններ՝ նույն մատակարարի կողմից մատակարարված՝ կենցաղային ջեռոցի մի շարք մոդելների վերաբերյալ:
4. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել յուրաքանչյուր խցիկի պիտակի պատճենի տեսքով (գունավոր կամ սեւ ու սպիտակ): Այս դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռ ցուցադրված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:

Բ. ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Կենցաղային օդաքարշ պահարանների՝ 3(1)(բ) (ii) հոդվածում նշված արտադրանքի տեղեկաթերթիկում ներկայացված տեղեկությունները տրամադրվում են ստորեւ սահմանված կարգով եւ հերթականությամբ եւ ներառվում արտադրանքի մասին բրոշյուրում կամ արտադրանքի հետ տրամադրված այլ գրականության մեջ՝
 - ա) մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.

- բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով որոշակի կենցաղային օգաքարշ պահարանի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ եւ կենցաղային օգաքարշ պահարանի պիտակում պարունակվող ցանկացած պարամետրի համար հայտարարված տարբեր արժեքներով այլ մոդելներից (III հավելվածի 2-րդ կետ).
- գ) տարեկան էներգասպառումը ($SEU_{\text{օգաքարշ պահարան}}$)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ արտահայտված կՎտժ/տ-ով եւ կլորացված տասնորդական նիշով. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
- դ) I հավելվածի 2-րդ աղյուսակում սահմանված էներգաարդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
- ե) հիդրոգազադինամիկայի արդյունավետությունը ($\zeta_{\text{ԳԴԱ}}_{\text{օգաքարշ պահարան}}$)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ կլորացված տասնորդական նիշով. հայտարարված արժեքը չպետք է լինի բարձր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
- զ) I հավելվածի 3-րդ աղյուսակում սահմանված հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի լավը, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
- է) լուսավորման արդյունավետությունը ($LU_{\text{օգաքարշ պահարան}}$)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն, արտահայտված յուքս/Վատտ-ով եւ կլորացված տասնորդական նիշով. հայտարարված արժեքը չպետք է լինի բարձր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.

- ը) I հավելվածի 4-րդ աղյուսակում սահմանված լուսավորման արդյունավետության դասը, հայտարարված դասը չպետք է լինի ավելի լավը, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
- թ) յուղերի ֆիլտրման արդյունավետությունը՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ արտահայտված տոկոսներով եւ կլորացված տասնորդական նիշով. հայտարարված արժեքը չպետք է լինի բարձր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
- ժ) I հավելվածի 5-րդ աղյուսակում սահմանված յուղերի ֆիլտրման արդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի լավը, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
- ժա) օդի հոսքը ($m^3/\text{ժ}$ -ով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը)՝ նորմալ օգտագործման դեպքում նվազագույն եւ առավելագույն արագությամբ՝ բացառությամբ ինտենսիվ կամ արագացված ռեժիմների. հայտարարված արժեքները չպետք է լինեն ավելի բարձր, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները.
- ժբ) առկայության դեպքում օդի հոսքը ($m^3/\text{ժ}$ -ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը)՝ ինտենսիվ կամ արագացված կարգավորմամբ. հայտարարված արժեքը չպետք է լինի բարձր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքներից.
- ժգ) Ա սանդղակով չափված՝ օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները (դԲ -ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը)՝ նորմալ օգտագործման դեպքում հնարավոր նվազագույն եւ առավելագույն արագությամբ. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
- ժդ) առկայության դեպքում Ա սանդղակով չափված՝ օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները (դԲ -ով,

կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը)՝ ինտենսիվ կամ արագացված կարգավորմամբ. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.

ժե) եթե կիրառելի է, էներգասպառումն անջատված ռեժիմում (Pw)՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով. հայտարարված արժեքները չպետք է լինեն ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքներից.

ժզ) եթե կիրառելի է, էներգասպառումը սպասման ռեժիմում (Pu)՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով. հայտարարված արժեքները չպետք է լինեն ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքներից:

2. Մեկ տեղեկաթերթիկը կարող է ներառել տեղեկություններ՝ նույն մատակարարի կողմից մատակարարված կենցաղային օդաքարշ պահարանի մի շարք մոդելների վերաբերյալ:
3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով (գունավոր կամ սեւ ու սպիտակ): Այդ դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռ ցուցադրված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տեխնիկական փաստաթղթերը**

Ա. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. 3(1)(ա)(iii) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են առնվազն՝
 - ա) մատակարարի անունը եւ հասցեն,
 - բ) սարքի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն հստակ կերպով եւ հեշտությամբ նույնականացնելու համար, այդ թվում՝ մատակարարի մոդելի նույնականացուցիչը (այսինքն՝ ծածկագիրը՝ սովորաբար տառաթվային), որով որոշակի կենցաղային ջեռոցի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ եւ կենցաղային ջեռոցի պիտակում պարունակվող ցանկացած պարամետրի համար հայտարարված տարբեր արժեքներով այլ մոդելներից (III հավելվածի 1-ին կետ).
 - գ) չափումների համար նախատեսված հետեյալ տեխնիկական պարամետրերը՝
 - i) խցիկների թիվը, յուրաքանչյուր խցիկի ծավալը, մեկ խցիկի համար տաքացման աղբյուրը (աղբյուրները), տաքացման գործառույթը (գործառույթները) (սովորական եւ (կամ) սեղմված օդով կոնվեկցիա) մեկ խցիկի համար.
 - ii) յուրաքանչյուր խցիկի՝ մեկ ցիկլի համար էներգասպառումը սովորական ռեժիմով եւ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմով. չափվող էներգասպառումն արտահայտվում է կՎտժ-ով (էլեկտրական ջեռոցներ եւ գազօջախներ) եւ ՄՋ-ով (գազօջախներ)՝ կլորացված հարյուրերորդական նիշով.

- iii) Էներգաարդյունավետության ինդեքսը (E_{ED})՝ կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար՝ հաշվարկված II հավելվածի 1-ին կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով.
 - iv) Էներգաարդյունավետության դասը՝ I հավելվածի 1-ին աղյուսակում սահմանված կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար.
 - դ) II հավելվածի համաձայն կատարված հաշվարկումների պատճենը եւ արդյունքները.
 - ե) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
 - զ) անհրաժեշտության դեպքում՝ մյուս օգտագործված տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
 - է) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություն ունեցող անձի նույնականացումը եւ ստորագրությունը:
2. Մատակարարները վերոնշյալ ցանկի վերջում կարող են ներառել լրացուցիչ տեղեկություններ:

Բ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ

ՊԱՀԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. 3(1)(բ)(iii) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են առնվազն՝
- ա) մատակարարի անունը եւ հասցեն,
 - բ) սարքի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն հստակ կերպով եւ հեշտությամբ նույնականացնելու համար, ներառյալ՝ մատակարարի մոդելի նույնականացուցիչը (այսինքն՝ ծածկագիրը՝ սովորաբար տառաթվային), որով որոշակի կենցաղային օդաքարշ

պահարանի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվամբ եւ կենցաղային օգաքարշ պահարանի պիտակում պարունակվող ցանկացած պարամետրի համար հայտարարված տարբեր արժեքներով այլ մոդելներից (III հավելվածի 2-րդ կետ).

- գ) չափումների համար նախատեսված հետեւյալ տեխնիկական պարամետրերը՝
- 1) էներգաարդյունավետության ինդեքսը ($E_{U_{\text{օգաքարշ}}}$ պահարան)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 2) էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է I հավելվածի 2-րդ աղյուսակում.
 - 3) տարեկան էներգասպառումը ($S_{E_{\text{օգաքարշ}}}$ պահարան)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ արտահայտված կՎտժ/տ-ով եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 4) ժամանակի ավելացման գործոնը (f)՝ II հավելվածի 2-րդ կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 5) հիդրոգազադինամիկայի արդյունավետությունը ($\zeta_{\text{H}_{\text{օգաքարշ}}}$ պահարան)՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 6) հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասը, ինչպես սահմանված է I հավելվածի 3-րդ աղյուսակում.
 - 7) կենցաղային օգաքարշ պահարանի չափված հոսքի արագությունն առավելագույն արդյունավետության կետում (Q_{max})՝ արտահայտված մ³/ժ-ով եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 8) կենցաղային օգաքարշ պահարանի ստատիկ ճնշման տարբերության չափված արժեքն առավելագույն

արդյունավետության կետում (P_{սս4})՝ արտահայտված Պա-ով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

- 9) կենցաղային օդաքարշ պահարանի մուտքային էլեկտրական հզորության չափված արժեքն առավելագույն արդյունավետության կետում (W_{սս4})՝ արտահայտված Վատտով եւ կլորացված տասնորդական նիշով.
- 10) պատրաստման մակերեսային վրա լուսավորման համակարգի միջին լուսավորվածությունը (E_{միջին})՝ արտահայտված լյուքսով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- 11) պատրաստման մակերեսային վրա լուսավորման համակարգի անվանական էներգիայի սպառումը (W_L)՝ արտահայտված Վատտով եւ կլորացված տասնորդական նիշով.
- 12) լուսավորման արդյունավետության (LԱ_{օդաքարշ պահարան}) չափված արժեքը՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն, արտահայտված լյուքս/Վատտով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- 13) լուսավորման արդյունավետության դասը, ինչպես սահմանված է I հավելվածի 4-րդ աղյուսակում.
- 14) յուղերի ֆիլտրման արդյունավետության (ՅՖԱ_{օդաքարշ պահարան}) չափված արժեքը՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն եւ կլորացված տասնորդական նիշով.
- 15) յուղերի ֆիլտրման արդյունավետության դասը, ինչպես սահմանված է I հավելվածի 5-րդ աղյուսակում.
- 16) եթե կիրառելի է, էներգասպառումն անջատված ռեժիմում (P_w)՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով.

- 17) եթե կիրառելի է, էներգասպառումը սպասման ռեժիմում (P_d)՝ արտահայտված Վատտով եւ կլորացված հարյուրերորդական նիշով.
 - 18) Ա սանդղակով չափված՝ օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները նորմալ օգտագործման դեպքում՝ հնարավոր նվազագույն եւ առավելագույն արագությամբ, արտահայտված դԲ-ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
 - 19) առկայության դեպքում Ա սանդղակով չափված՝ օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները՝ ինտենսիվ կամ արագացված կարգավորմամբ, արտահայտված դԲ-ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
 - 20) կենցաղային օդաքարշ պահարանի օդի հոսքի արժեքները նորմալ օգտագործման դեպքում՝ հնարավոր նվազագույն եւ առավելագույն արագությամբ՝ արտահայտված մ³/ժ-ով եւ կլորացված տասնորդական նիշով.
 - 21) առկայության դեպքում կենցաղային օդաքարշ պահարանի օդի հոսքի արժեքը՝ ինտենսիվ կամ արագացված կարգավորմամբ, արտահայտված մ³/ժ-ով եւ կլորացված տասնորդական նիշով.
- դ) II հավելվածի համաձայն կատարված հաշվարկումների պատճենը եւ արդյունքները.
- ե) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
- զ) անհրաժեշտության դեպքում՝ մյուս օգտագործված տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
- է) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություն ունեցող անձի նույնականացումը եւ ստորագրությունը:
2. Մատակարարները կարող են ներառել լրացուցիչ տեղեկություններ:
-

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը՝ բացառությամբ համացանցի միջոցով տեսնելու

Ա. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՑՆԵՐ

1. 4(1)(բ) հոդվածում նշված տեղեկությունները ներկայացվում են հետևյալ հերթականությամբ՝
 - ա) մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, այսինքն՝ որոշակի կենցաղային ջեռոցի մոդելի նույնականացուցիչը, որին վերաբերում են ստորեւ բերվող թվերը:
 - գ) I հավելվածի 1-ին աղյուսակում սահմանված յուրաքանչյուր խցիկի մոդելի էներգաարդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
 - դ) յուրաքանչյուր խցիկի համար մեկ ցիկլի համար էներգասպառումը սովորական ռեժիմով եւ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմով. չափվող էներգասպառումը արտահայտվում է կՎտժ-ով (էլեկտրական ջեռոցներ եւ գազօջախներ) եւ ՄՋ-ով (գազօջախներ)՝ կլորացված հարյուրերորդական նիշով. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
 - ե) խցիկների թիվը, մեկ խցիկի համար տաքացման աղբյուրը (աղբյուրները), յուրաքանչյուր խցիկի ծավալը:
2. Եթե տրամադրված են նաեւ արտադրանքի վերաբերյալ տեղեկությունների տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա դրանք պետք է համապատասխանեն IV հավելվածում նշված ձեւին եւ հերթականությանը:

3. Սույն հավելվածում նշված բոլոր տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթեռնելի տառաչափով եւ տառատեսակով:

Բ. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

1. 4(2)(բ) հոդվածում նշված տեղեկությունները ներկայացվում են հետեւյալ հերթականությամբ՝
- ա) մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, այսինքն՝ որոշակի կենցաղային օգաքարշ պահարանի մոդելի նույնականացուցիչը, որին վերաբերում են ստորեւ բերվող թվերը.
 - գ) I հավելվածի 2-րդ աղյուսակում սահմանված մոդելի էներգաարդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
 - դ) մոդելի՝ II հավելվածի 2.1 աղյուսակում սահմանված տարեկան էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ-ով. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից.
 - ե) մոդելի՝ I հավելվածի 3-րդ աղյուսակում սահմանված հիդրոգազադինամիկայի արդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
 - զ) մոդելի՝ I հավելվածի 4-րդ աղյուսակում սահմանված լուսավորման արդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.

- է) մոդելի՝ I հավելվածի 5-րդ աղյուսակում սահմանված յուղերի ֆիլտրման արդյունավետության դասը. հայտարարված դասը չպետք է լինի ավելի բարենպաստ, քան V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված դասը.
- ը) կենցաղային օդաքարշ պահարանի Ա սանդղակով չափված՝ օդով փոխանցվող ակուստիկ ձայնի հզորության ելքային ցուցանիշները (միջին չափված արժեք՝ L_{M2}) նորմալ օգտագործման դեպքում՝ հնարավոր նվազագույն եւ առավելագույն արագությամբ, արտահայտված դԲ-ով, կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը. հայտարարված արժեքը չպետք է լինի ցածր V հավելվածի տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքից:
2. Եթե տրամադրված է նաեւ արտադրանքի վերաբերյալ տեղեկությունների տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա դրանք պետք է համապատասխանեն IV հավելվածում նշված ձեւին եւ հերթականությանը:
3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթեռնելի տառաչափով եւ տառատեսակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Համացանցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի
դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

1. Սույն հավելվածի 2-5-րդ կետերի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝
 - ա) «ցուցադրիչի մեխանիզմ» նշանակում է ցանկացած էկրան, այդ թվում՝ սենսորային էկրան կամ այլ վիզուալ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են համացանցի բովանդակությունն օգտագործողներին ցուցադրելու համար.
 - բ) «ներդրված ցուցադրիչ» նշանակում է վիզուալ միջերես, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրա անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ:
 - գ) «սենսորային էկրան» նշանակում է համանուն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչինը, սալակարգչինը կամ սմարթֆոնինը.
 - դ) «այլընտրանքային տեքստ» նշանակում է տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս ներկայացնել տեղեկությունները ոչ գրաֆիկական ձևով այն դեպքում, երբ ցուցադրող սարքվածքները չեն կարող վերարտադրել գրաֆիկը, կամ որպես հասանելիության միջոց, ինչպես օրինակ՝ ձայնի սինթեզի հավելվածների մուտքային տվյալները:
2. 3(1)(ա)(vi) կամ 3(1)(բ)(vi) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է ցուցադրիչի մեխանիզմի վրա արտադրանքի գնի կողքին՝ համաձայն 3(3) հոդվածում նշված ժամանակացույցի: Ջեռոցների դեպքում համապատասխան պիտակը ցուցադրվում է ջեռոցի յուրաքանչյուր խցիկի վրա: Չափը պետք է լինի

այնպիսին, որ պիտակը լինի հստակ կերպով տեսանելի եւ ընթեռնելի, ինչպես նաեւ այն պետք է համապատասխանի III հավելվածում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներդրված ցուցադրիչի միջոցով, որի դեպքում պիտակին հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետում սահմանված մասնագրերին: Եթե կիրառվում է ներդրված ցուցադրիչ, ապա պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրա անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

3. Պիտակին հասանելիության համար պատկերը ներդրված ցուցադրիչի դեպքում՝

ա) պիտակի վրա արտադրանքի էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնով սլաք է,

բ) սլաքի վրա նշում է արտադրանքի էներգաարդյունավետության դասը սպիտակ գույնով այդ գնին համարժեք տառաչափով, եւ

գ) ունի հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



4. Ներդրված ցուցադրիչի դեպքում պիտակի ցուցադրիչի հաջորդականությունը հետեւյալն է՝

ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը ցուցադրվում է ցուցադրիչի մեխանիզմի վրա արտադրանքի գնի կողքին.

բ) պատկերը հղում է կատարում պիտակին.

գ) պիտակը ցուցադրվում է մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրա անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.

դ) պիտակը ցուցադրվում է հայտնվող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված ցուցադրիչով.

- ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար կիրառվում են սենսորային խոշորացման համար սարքվածքների պայմանական նշանները.
 - զ) պիտակի ցուցադրությունն ավարտվում է փակելու տարբերակի միջոցով կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմով.
 - է) գրաֆիկի համար այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ձախողման դեպքում, վերաբերում է արտադրանքի էներգաարդյունավետության դասին՝ գնի տառաչափին համարժեք տառաչափով:
5. 3(1)(ա)(vii) կամ 3(1)(բ)(vii) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան արտադրանքի տեղեկաթերթիկը ցուցադրվում է ցուցադրիչի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Չափը պետք է լինի այնպիսին, որ արտադրանքի տեղեկաթերթիկը լինի հստակ կերպով տեսանելի եւ ընթեռնելի: Պիտակը կարող է ցուցադրվել ներդրված ցուցադրիչի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկին հասանելիության համար օգտագործվող հղման վրա հստակ եւ ընթեռնելի կերպով նշվում է «Արտադրանքի տեղեկաթերթիկ»: Եթե օգտագործվում է ներդրված ցուցադրիչ, ապա արտադրանքի տեղեկաթերթիկը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրա անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Շուկայի վերահսկողության մարմինների կողմից արտադրանքի
համապատասխանությունը ստուգելու ընթացակարգը**

Սույն կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու նպատակներով անդամ պետությունների մարմինները կիրառում են հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետության մարմինները փորձաստուգում են մեկ մոդելին համապատասխան մեկ միավոր:
2. Համարվում է, որ մոդելը համապատասխանում է կիրառելի պահանջներին՝
 - ա) եթե պիտակի վրա կամ արտադրանքի տեղեկաթերթիկում արժեքները եւ դասերն ավելի բարենպաստ են մատակարարի համար, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները, այդ թվում՝ փորձարկումների մասին հաշվետվությունները, եւ
 - բ) եթե 6-րդ աղյուսակում նշված թույլատրելի շեղումների կիրառմամբ համապատասխան մոդելի պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս բոլոր այդ պարամետրերի մասով համապատասխանություն:
3. Եթե 2(ա) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:
4. Եթե 2(բ) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ մասեր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ մասերը կարող են ընտրվել մեկ կամ մի քանի տարբեր մոդելներից, որոնք մատակարարի տեխնիկական փաստաթղթերում նշվել են որպես համարժեք արտադրանք:

5. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե 6-րդ աղյուսակում նշված համապատասխան մոդելի պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս բոլոր այդ պարամետրերի մասով համապատասխանություն:
6. Եթե 5-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմիններն այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին տրամադրում են փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց մեկ ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են II հավելվածով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածով սահմանված թույլատրելի շեղումները կիրառվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգման նկատմամբ՝ հանդիսանալով ստուգման փորձարկումների չափման արդյունքների թույլատրելի տատանումներ, եւ չեն օգտագործվում մատակարարի կողմից տեխնիկական փաստաթղթերում արժեքների սահմանման կամ այդ արժեքների մեկնաբանման ժամանակ՝ պիտակավորման բարելավված դասակարգում ապահովելու կամ ցանկացած միջոցով ավելի լավ արդյունքներ ներկայացնելու նպատակով:

Աղյուսակ 6

Ստուգման առավելագույն թույլատրելի շեղումները

Չափվող պարամետրերը	Ստուգման առավելագույն թույլատրելի շեղումները
Ջեռոցի զանգվածը (M)	Որոշված արժեքը չպետք է գերազանցի M-ի հայտարարված արժեքն ավելի քան 5 տոկոսով:
Ջեռոցի խցիկի ծավալը (V)	Որոշված արժեքը չպետք է լինի ցածր V-ի հայտարարված արժեքից ավելի քան 5 տոկոսով:
ԷՍ _{էլեկտրական խցիկ} ՝ ՎՍ _{գազային խցիկ}	Որոշված արժեքը չպետք է գերազանցի ԷՍ _{էլեկտրական խցիկ} -ի, ԷՍ-ի հայտարարված արժեքն ավելի քան 5 տոկոսով:
W _{ԱԱԿ} ՝, W _L	Որոշված արժեքը չպետք է գերազանցի W _{ԱԱԿ} , W _L -ի հայտարարված արժեքն ավելի քան 5 տոկոսով:
Q _{ԱԱԿ} ՝, P _{ԱԱԿ}	Որոշված արժեքը չպետք է լինի ցածր Q _{ԱԱԿ} -ի, P _{ԱԱԿ} -ի հայտարարված արժեքից ավելի քան 5 տոկոսով:
Q _{առավելագույն}	Որոշված արժեքը չի գերազանցում Q _{առավելագույն} -ի հայտարարված արժեքն ավելի քան 8 տոկոսով:
E _{միջին}	Որոշված արժեքը չպետք է լինի ցածր E _{միջին} -ի հայտարարված արժեքից ավելի քան 5 տոկոսով:
ՅՖԱ _{օրաքարշ պահարան}	Որոշված արժեքը չպետք է լինի ցածր GFE _{օրաքարշ պահարան} -ի հայտարարված արժեքից ավելի քան 5 տոկոսով:
P _w ՝ P _v	P _w եւ P _v էներգիայի սպառման որոշված արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքն ավելի քան 10 տոկոսով: 1.00 Վտ-ից պակաս կամ հավասար՝ էներգիայի սպառման որոշված P _w եւ P _v արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքն ավելի քան 0.10 Վտ-ով:
Ձայնի հզորության մակարդակը L _{ԱԿ}	Որոշված արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքը: